ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3- Ն-7802

«22» սեպտեմբերի 2021թ.

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի տնօրեն Է. Հովսեփյանին,
«Ֆորտունա սիթի» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Կարապետյանին,
Ա/Ձ ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻՆ

Սույնով ծանուցվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/12» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար ՀՀ զինանշանի, դրոշների և կենցաղային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. սեպտեմբերի 9-ի որոշմամբ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով՝ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով՝ «Ֆորտունա սիթի» ՍՊԸ-ն և 6-րդ չափաբաժնի մասով՝ ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻՆ Ա/Ձ-ն հայտարարվել են ընտրված մասնակիցներ:

Հիշյալ ընթացակարգի մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, սահմանվել է անգործության ժամկետ՝ մինչև 2021թ. սեպտեմբերի 20-ը ներառյալ: Հիշյալ անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Տեղեկացվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/12» ծածկագրով պայմանագրի նախագիծը տրամադրվել է համակարգի միջոցով: Առաջարկվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/12» ծածկագրով հրավերի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել այն՝ միաժամանակ ներկայացնելով նաև որակավորման և պայմանագրի ապահովումները՝ միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների (Ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին (համապատասխանաբար Հավելված 3.2 և Հավելված 4.1) համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին:

Պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ՝

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/12» ծածկագրով
գնումը համակարգող՝ Դ. Թովմասյան
Հեռ.՝ 511-788, 511-792